



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
 Կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,
 ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:
 Թ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ.
 ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
 ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍՑ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
 ՔԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐ

Տարեկան	ՏՂ. ՍՄ. 1 50	Տարեկան	10 Փրանք.
Վեցամսեայ	75	Բաժանորդագրին ԿԱՆՈՒԻԿ	
Շումսեայ	40	Վճարելի է միշտ:	

Մտար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝
 To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.
 ՆԻՒ ԵՈՐՔ, ՇԱՐԱԹ, ՕԳՈՍՏՈՍ 20 1898.

ԿԱՐԵՒՈՐ ՄԱՆՈՒՑՈՒՄ

Անցեալ օր ոստիկանութեան դատարանին առջև քանի մը թուիս ամբաստանեալներ բերուած էին. առնց մին իբր գող ամբաստանուած էր, իսկ միւսներն իբր մեղսակից: Ամբաստանող ոստիկանն ամբաստանեալներու ամենն ալ իտալացի արձանագրել տուած էր: Թարգմանի մը միջոցաւ՝ ոմանք ուրացան և ոմանք յանցանքը ուրիշ մը վրայ նետեցին: Երբ կարգը եկաւ վերջինին, որ իբր մեղսակից ամբաստանուած էր, թարգմանն անկէ իր ո՛ւ է հարցման պատասխան մը չի կարողացաւ ստանալ: «Ես իտալացի չեմ, կ'ըսէր տղան, կոտրած անգլիներէնով, այլ Հայ եմ»: Դատաւորը հաւատալ չ'ուզեց նախ իտալերէնի և անգլիերէնի անձանթ մէկը ամբաստանեալներուն չէր կրնար մեղսակից ըլլալ: Դատարանի թարգմանն խնդրել լուծելու համար գրպանէն ՏԻԳՐԻՍ մը հանեց, որ կը պահէր իբր նշամուր, ու տուաւ տղուն որ կարգայ: Ամբաստանելուն Հայ ըլլալը հաստատուեցաւ ու ազատ արձակուեցաւ՝ շնորհիւ Հայ թերթին:

Կը հրատարակուի շաբաթ մի անգամ. տարեկանն է մէկ ու կէս տոլար: * * *

Ի՞նչ Անենք

Մօտ օրերս մէկ ինտելիգէնտ Պարոնի հետ խօսում էինք Ամերիկայի Հայոց խառնաշփոթ դրութեան, բանւոր դասակարգի մէջ գոյութիւն ունեցող անվայել անպատուարներ ընթացքի և մեր շատ ու քիչ աչքի ընկնող զարգացած երիտասարդութեան անտարբեր հանդիսատեսութեան մասին: Իմ նկատողութիւնը սաստիկ վերաւորեց պատուասէր ինտելիգէնտ պարոնին. վերջինս կծու, արհամարհական կերպով պատասխանեց իմ՝ եթէ չեմ սխալուած, ինչպէս որ ընթերցողը պիտի նկատէ այս յօդուածում, ազատ արդարացի նկատողութիւններին: «Ի՞նչ անենք, ի՞նչ կրնայ ընել ինտելիգէնտը փրկած բազմատարր բանւորին, որոնցմէ աւելի աղէկ է, մեր պատիւը չ'արտաւորելու համար՝ միշտ հեռու մնալ. իսկ աղաներին խօսք հասկնել չ'ըլլար, քանզի անոնց մէջ ոսկրացած է իշխելու և ինքնազուրկ գործելու բնաւորութիւնը. օրինակ քեզ կ. Պօլսոյ Ազգային Վարչութիւնը և անոնց ուղղութիւնը, գործերը քննադատող «Հայրենիք» թերթը. քեզի կը թողու՞մ, յաղթանակը որի՞ն մնաց:»

Այս վերջին հարցի մասին խօսելու յաւակնութիւն չունիմ. բոլոր սրտով համակրում ենք Տաճկահայոց համար երկրորդ Մշակ-Հայրենիք թերթին, և ցուում նրա դադարման համար. ուստի դառնանք մեր հարցին:

Ի՞նչ անենք: Բայց նախ որոշ լինելու է թէ ի՞նչ հարց, ի՞նչ խնդիրներ կան մեր առաջը դրուած, որ ըստ այնմ մեր դերը, մեր անելիքը գիտնանք. մենք նոր առաջարկութիւն չ'ունինք մեր ինտելիգէնտ երիտասարդութեան. առանց այն էլ մինչև այժմ շատ խնդիրներ, շատ հարցեր է յարուցել ՏԻԳՐԻՍ մի քանի ամսուայ ընթացքում, որոց և ո՛չ միինը լիակատար լուծում չէ ունեցել: Ուշի ուշով կարգացէ՛ք ՏԻԳՐԻՍԻ առաջին թիւից մինչև վերջինը, ուր նրա առաջնորդողներում և թղթակցութիւններում պիտի գտնենք շատ անելիք: Թերթի պարտականութիւնն է հասարակաց առ օրեայ կեանքին հետամուտ լինիլ. կարևոր խնդիրներն ուսումնասիրել. նորանոր հարցեր յարուցանել՝ իրանց բազմակողմանի ուսումնասիրութեամբ, մի խօսքով՝ խնդրել ծեծել, լուսարանել, դնել մտածող մասսայի առաջ. իսկ վերջինիս պարտականութիւնն է համախմբել և տեղի ու պարագաների յարմարութեամբ խնդրին ուղղութիւն տալ, քաղցնել դէպի իր որոշ նպատակը, ի հարկէ, անհրաժեշտ է յիշեցնել, փոխադարձ օգնութեամբ. և ահա այստեղ ընդորոշում է մեր ինտելիգէնտ՝ մտածող

բանի մաց երիտասարդութեան դերը. մեր խօսքը այնպիսի սինթէզն է, որոնք «Ի՞նչ կրնանք ընել» խուսափողական պատասխանով՝ մինչև իսկ բանւոր դասակարգին ծանր վերաւորանք պատճառելով՝ զանց են առնում իրանց պարտականութիւնը. ո՛չ նորանց, որոնք անձնական գծուծ հաշիւներից դրուած՝ անհիմն փաստերով սորան նորան անուանարկելու համար մամուլը՝ հասարակաց սրբութիւնը արատաւորել են յանդգնում. և երբ հասարակաց սրբութիւնը իր կողման բարձրութեան վերայ պահելու աջակցութիւնը հսկիչներին կողմից այդ նորանց զլացում է, ագռաւական աղմուկով օդը թնդացնում են: Սորանք իսկի ինտելիգէնտ կոչւելու արժանիքը չունին. բայց եթէ կան մեր մէջ երիտասարդներ, հասարակաց շահերով հետաքրքրուողներ, որոնք սարսափով են նայում մեր, իրօք ցաւակցութեան արժանի բանւորների սխուր ապագային, եթէ կան այնպիսիք, որոնք զգում են թէ իրանք ժողովուրդի իրական բարեկամներն են, նոյնպէս զգում են թէ ունին մտաւոր կարողութիւն, կամքի ոյժ, ուղղակի նորանց է մեր առաջարկութիւնը. նորանք պարտաւոր են եղբայրաբար ձեռք ձեռքի տալ, համախմբուիլ, անկեղծօրէն անլուծ խնդիրները նորից նկատողութեան առնել, պատճառներն քննել և միջոցներ ձեռք առնել, իսկ դժուարին պարագաներում՝ մամուլը միշտ պատրաստ է սիրայօժար իւր աջակցութիւնը նուիրել, եթէ ի պահանջել հարկին պէտք զգացուի:

Մի զարմանալի բնաւորութիւն ունինք մենք Հայերս. այն է նախաձեռնելու կամքը պահասում է. միշտ սպասում ենք ուրիշը սկսի, մենք հետևինք. օրինակ, դիցուք մեր ճանապարհի վերայ փռած են քարեր, ամեն օր մեր ոտքը քարին զարկելով կ'անցնինք, բայց երբ մինը գիտնել տայ և առաջին քարը հրէ, ամենք նորա օրինակին հետևելով՝ ճանապարհը կը մաքրենք. և դորան կ'ասեն ոչխարային բնաւորութիւն:

Ինտելիգէնտ պարոնի մը, ձեր կոչումը շատ բարձր է, մի՛ սպասէք մինչև ուրիշը սկսէ. և ոչ յոյս դրէք աղաների վերայ. նորանք մինչև կողորդել խրուած են իրանց դժբախտական հաշիւների մէջ. իսկ մեր կղերքը — նորանք արդէն ցոյց տուին թէ որքան սպիկար, անընդունակ մարդիկ են:

Սակայն մի կէտ կայ, որն նպատակին յարակից է եւ յատկապէս կը ցանկանայի ուշադրութեան առնել. եթէ «Հայրենիք» թուրքաց ինտրիկներին զոհ դնաց, սակայն «Մշակ»ը մնում է, և իր շնամեայ գործունէութիւնը հարթել է անթիւ խոչնդոտներ, և որի անկեղծ դրօշի տակ համախմբուած է մի ահազին բանակ, որ դեռ կուռւմ է աղայականութեան և կղերքայինութեան դաժմամտութեան դէմ: ՏԻԳՐԻՍԸ թէ և չունի այն ահազին դժբախտութիւնները, ինչ որ վերապահուած էր երկու առաջիններին, բայց այնուամենայնիւ երբէք խոյս չէ տուել անաչափ փաստացի քննադատողի դերին՝ առանց նկատի առնելու կղերքի ու աղան, ուսմիկն ու ինտելիգէնտը, այսպէս էլ այսուհետև կ'շարունակէ միշտ, ի հարկէ, գերակշիռ փաստերի վերայ հիմնուած...: Ուրեմն թէ՛ անցեալի և թէ՛ ապագայի վերաբերմամբ, էլ չ'անենք «Ի՞նչ անենք», այլ անենք, ինչ որ կարող ենք անել, ինչ որ հասարակաց շահն է պահանջում: Հ. ԱՐՁՈՒՄԱՆՆԱՆԾ

ԲԱՐԵՆՈՐԴԱԳՐՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (Շար. 39րդ թուէն)

Լուսահոգի գրասենեակին բացումէն քիչ ատեն վերջ տրուանք լուսիլ սկսեցին: Ժողովուրդը կը բողբօքս ամեն կողմէ, վասն զի իր պահանջներուն մասամբ իսկ գոհացում չէր տրուել այդ աննշան հաստատութեամբ: Ծըշմարտութիւնն ըսած պիտի ըլլանք եթէ խոստովանինք նաև թէ ծախսուած գրամներուն փոխարէն ոչինչ կատարուեցաւ պիւրոյի միջոցաւ՝ ժողովուրդի կողմէն զնահատուելու չափ արժանի. անգործները անգործ մնացին. օգնութեան կարօտ անձինք՝ անօգնական՝ նորէն. շատ նորեկներ ետ զրկուեցան Գաղթականական Վարչութեան կողմէ, ճիշդ այնպէս որպէս կը զրկուէին Բարեգործականի գոյութիւն ունենալէն առաջ. և իրաց այս վիճակը ի հարկէ ժողովուրդը պաղեցուց բողբօքսին, որ երթալով վճատեցաւ ու յոյսը կարեց իր ջղիքու խմբէն:

Մինչ մէկ կողմէ ընկերութեան գրամներն կը ծախսուէին չոր յոյսերու փոխարէն, ու ժողովուրդը կ'ապասէր յուսախաբ, միւս կողմէ ընկերութիւնն իր փայլուն յայտարարութիւններով կը միթիթէր գաղթականութիւնն և աջակցութիւն ու նպաստ կը պահանջէր շարունակ, բայց ոչ «կոյր ըստ կուրայն քննադատութիւն» վասն զի «ՁԱ անձանց զօր զտնելու ջանքեր եղան, Գ անձանց գործ գտնուեցաւ (Չ), որոց երեքը մետաքսագործութիւն կը սորվին. 4 անձինք Գաղթ կարտընէ հանելու համար պաշտօնական ղիմում եղած է. տեղական պիւրօճներու հետ յարաբերութեան մտնելու ջանքեր եղան» ալ ի՞նչ ըլլար. այս բաւական չէ՞...: Այս և սուր նման պարագաներ մի անգամ ընդ միշտ ցոյց տուին թէ Գործադիր Ժողովը «գուք գրամ տուէք և բանի մը մի՛ խառնուիք» ի հին ու դատապարտելի քաղաքականութեան կը ջանար հետևել,

առանց յիշելու սակայն թէ ինք ժողովուրդով, ժողովուրդի համար և ժողովուրդէն էր...:

Այս սխալ շաղկին հետևութիւնն էր քաղաքայում և սնանկութիւն, վասն զի Գործ. Ժողովը իր դէպի ժողովուրդ ունեցած պարտականութիւնը կատարած չէր խղճի մտօք, ու վայելած չէր անոր անպայման վրատակութիւնը:

Թէ ո՛րչափ եղծուներ տեղի ունեցան ներքին գործերու մէջ՝ մենք փափաք չունինք քրքրել հոս. միայն վատահ ենք թէ Բարեգործական Ընկերութեան Գործադիր Ժողովը խղճի մտօք չի գործածեց իր արամադրութեան տակ դրուած ստակն: Տ. Կիւլւպէնկեան, կը յիշեն ընթերցողք թէ իր 100 տոլար նուէր կրկնապատկել և բազմապատկել խոստացաւ Փետր. 6ի ժողովին մէջ՝ եթէ սկզբնական նուէրն գործածուէր իր նպատակին: Տ. Կիւլւպէնկեան ո՛չ միայն չի կըրկնեց իր նուէրն, այլ, մեր լսածին նախելով, դեռ առջի հարիւրն անգամ վճարած չէ Գանձապետին, վասն զի Գործ. Ժողովը իր արամադրութեան տակ ունեցած գումարը շրջահայեցուցեալ չի ծախսեց. կամ լաւագոյն է ըսել՝ ծախսելէ զատ ուրիշ ոչինչ ըրաւ նշանակելի:

Գործակալ մը ընտրելու խնդրը Գործադիր Ժողովոյ առջև բերուած օրէն կրօնական խտրութեան նշաններ երևցան. մենք բողբօքսեցինք, եւ հրապարակային բողբօք մի քիչ իւր ազդեցութիւնն ունեցաւ, բայց միտքերը չի փոխեց: Երբեմն աղքատներ ձեռնուներս մեկնեցան, որովհետև շրջակայ արուարձանի մը մէջ ընկելու դժբաղդութիւնն ունեցել էին!, բայց ամբողջ ընտանիք մը Գաղթօրնիայ զրկուեցաւ, որովհետև ընտանիքի հայրը Պօլսոյ շարքին ատեն ոտքը կորսնցուցած էր! Երկու աչքերը կոյր արտապարդ մը անուստուռութիւն չի գտներ, զի ձէրդիէն կուգար բայց ամբողջ ձմեռ ինքզինքնին հոգալու չափ կարող ընտանիքներ ածուխ եւ նաւաստ կ'ստանան ինչո՞ւ — ինչուն չի կայ, այս իրողութիւն է: Անցեալներն ձէրդիէն 16 տարեկան տղայ մը՝ թոքախտէ բռնուած՝ Ընկերութեան կը դիմէ Եղբայրս երթալու համար նպատակ խնդրելու. կը մերժուի, վասն զի նա անպէտք դուրս կը շահակէր. և Բարեգործական Ընկերութիւնն իր շնորհաց դուները նիւ Եորք քաղաքի օրհնակ Հայ աղքատներուն առջև միայն կրնար բանալ: Ի՞նչ անգութ օրէնք... և ո՞վ իշխանութիւն տուաւ Վարչութեան այսպիսի օրէնք մը անցունել՝ առանց կանխաւ Ընկերութեան, եթէ ոչ ժողովուրդեան հաճութիւնն առնելու: Փոխանակ երկու ընտրուած քանի մը խնամակալ ընտրուելու համար ամիսներ գոհելու, կամ այսօրինակ դատապարտելի օրէնքներ գծելու, Գործադիր Ժողովը օգտակար քայլ մ'առած պիտի ըլլար եթէ ղիմում ընէր բողբօք ժողովուրդին՝ անկէ օգնութիւն, զօրութիւն և դադարաւոր խնդրէր: Բայց ինչպէս ըսինք «Դուք գրամ տուէք, բանի մը մի՛ խառնուիք և մի՛ քննադատե՛քը Գործադիր Ժողովոյ հաւատքն ու համոզումն էր:

Սակայն ի՞նչ ընելու է. — Բանի որ պէտք ունինք Բարեգործական Ընկերութեան մը, և քանի որ ժողովուրդեան թէ՛ հարուստ և թէ՛ աղքատը տրամադիր են իրենց տարեկան տուրքը դնել ընկերութեան մը տրամադրութեան տակ, փոխանակ անձամբ օգնելու այս կամ այն կարօտելուն, միջոց մը գտնելու է այս Բարեգործական հաստատուն հիման մը վրայ դնելով վերականգնել զայն: Ահաւասիկ մեր թեւադրութիւնը: (Միացեալը գալ անգամ)

ԴԱՐՁԵԱԼ ՈՐԲԵՐ

Սամաստի Ղալասար գիւղի Հայկական Որբանոցի Տնօրէնն Տ. Միհրան Պաղտասարեան մեզ զրկած է ընդարձակ կոչ մը զոր ստիպեալ համառօտելով կը հրատարակենք ու կը յանձնարարենք մեր ընթերցողաց և մանաւանդ Որբանոցում ընկերութեանց խորին ուշադրութեան:

Պ. Պաղտասարեան Չմիւռնիոյ որբանոցի Տնօրէնի որդին է, մի վստահելի, համեստ, ազնիւ, ամուսնացեալ և զաւակներու տէր անձ. ինք մտերմակապատակ է ու կը թուծուի անո՞ստ է Լէյպցիգի մէջ: Պ. Պաղտասարեան Գէորգի թուրքախոյն հալածուեցաւ իբր յեղափոխական և կողմասանցաւ. հոն վեհ. Հայրիկէ ստանալով մի յանձնարարական, որոյ օրինակը մեզ զրկած է հրատարակութեան համար, Սամաստ գնաց որբանոց մը բանալու համար. այդ թուականներուն չի յաջողելով իր նպատակի մէջ, Պ. Պաղտասարեան Ուրմիա անցաւ և հոն ուսուցչութեամբ պարսպիւ սկսեց, «Իր մասին առհասարակ լաւ էին խօսում ու գրում, կ'ըսէ զինքը մօտէն ճանչցող մի վըստակէի անձ, Եւրոպ շարժաթերթում»:

Պ. Պաղտասարեան մեզ զրկած է նաև իւր սաներու մի լուսանկար պատկերը, զոր թերևս տպենք Տիֆլիսի մէջ, եթէ հարկը պահանջէ:

Մեր Որբանոցում ընկերութիւններն, ինչպէս նաև կարող ազգայիններն կը յուսանք որ պիտի փութան պատասխանել այս կոչին այնպիսի գործնական պատասխանով, որ կարող ըլլայ թեթեւցունել Տնօրէնին բերու ու փրկել որբերն: Իսկ մենք ուրախ պիտի ըլլանք ընել ինչ որ կըրնանք Ղալասարի որբերուն արցունքը սրբելու միջոց մը դառնալու համար:

ԿՈՉ ԱՌ ԸԱՅ ԱԶԳՆ

Ղալասար, Սամաստ, 18 Յուլիս, 1898

1894ին Ամերիկայից վերադարձել էի Պարսկաստան և նպատակս էր Ուրմիայում մի որբանոց հիմնել՝ վասն այն անտէր և խղճալի երախտներ: Այդ նպատակը իրագործեց սակայն անցեալ 1897ին ամառը երբ գերմանական Հելֆրուտի Ագէնտ Հէն Հանց Ֆիշըր Ուրմիայի հրաւիրեց ինձ Ղալասարի որբանոցը հաստատելու, ուր 50ի շուրջ մեծաւ մասամբ Աղբակեցի որբացեալ երկսեռ հայ երախտը հետըզհետէ պատասխարան և սուպիմականութիւն գտան: Երկուստարվայ սկզբում Պաստոր Ֆոն Բէրգման անուն մի գերմանացի յաջորդեց Հանց Ֆիշըրին՝ իբր ներկայացուցիչ Հելֆրուտիսին, և մենք էլ Պարսկաստանում նոյն ընկերութեան ունեցած կալաններին հետ՝ ենթարկեցինք նրա անմիջական և լիազօր վարչութեան: Ղալասարի ժողովուրդը և մենք պատուում մեծարում էինք Բերգմանին, բայց շատ երկար չ'տևեց, յայտնեց և անհերքելի փաստերով ապացուցեց որ Պաստորը բոլորովին անարժան է եղել թէ՛ այդ պաշտօնին և թէ՛ վայելած համակրութեան և վստահութեան՝ բարոյական լուրջ պատճառներով: Յուզեց հասարակութիւնը նրա յանդիմութեանը համար. ուզում էին դիմել ծայրահեղ միջոցներին: Ապրիլ 20ին հեռագրեցի Տոկտոր Լէպպուսին՝ պատահած անցքի մասին յայտնելով թէ անհրաժեշտ էր հեռացնել Բէրգմանին իսկոյն, ապա թէ ոչ սքանալով անխուսափելի կը լինէր: Հայոց բարեկամ և պաշտպան ճանաչուած մեծանուն սովորող փոխանակ քննելու բացաւ փափուկ խնդիրը, վեր առնում նոյն իսկ Բէրգ-

մանից հարցնում է թէ ստոյգ է ամբաստանութիւնը. նա էլ իսկոյն պատասխանում է թէ բոլորովին անհիմն է: Նորից յուզվում է Ղալասար և մի քանի ժողովուրդ են լինում. որոշվում է որ գիւղի համայնքը գիւմէ ուղղակի Տոկտոր Լէպպուսին և Մայիսի 5ին հեռագրում են՝ խնդրելով հեռացնել Բէրգմանին իրանց գիւղից իսէր Աստուծոյ: Սրախողտող Հայաստանի վրայ կողորդելու արցունքներ թափող մեծահոգի սովորող արհամարհում է մի ամբողջ հասարակութիւնը: Հրամայում է Մայիսի 6ի հեռագրով Բէրգմանին իսկոյն պաշտօնանկ անել «Չորսրորից Պաղտասարեանին»: Ազնուական Պաստորը ամուսին վերջապէս յայտնում է վճիռը՝ պահանջելով որ որբանոցը յանձնեմ և դուրս գամ. ես համակերպելով հրամանին 5 օրվայ միջոց խնդրեցի՝ կարգադրութիւն անելու, իսկ Բէրգմանը հէնց հետեւեալ օրը յանկարծ վախից մեկնեց Ղալասարից դէպի Դալմէթ: Ահա այդ օրից Տոկտոր Լէպպուսը պատժել է Ղալասարի որբանոցը իր 60ի շուրջ պատասխարեալներով և մի սև փող չէ ուղարկում առօրեայ ծախուց համար, եւ այդ մեծ բազմութիւնը խնամում էմ ես իմ անձնական փողով, մինչդեռ Տոկտոր Լէպպուսը որբեր որդեգրող բարեխոյններից մեծ գումարներ է ստանում: Աւելին կայ, Յուլիս 18—30ին «ազնուական» Բէրգմանը վերադառնում է Սամաստ և առաւօտեան ժամը 10ին յանկարծ պաշարում է որբանոցը. նա կազմել էր մի ստուար արշաւանք. խումբը բաղկացած էր Պարսիկ սարպազներից, ձիաւոր և հետեակ, կառավարութեան Փարաչներ, իշապաններ և բռնակիրներ, նաև թուրք և հայ սրիկայից ոչ պակաս անձեր. դրանք ամենին առաջնորդում էր մի «ղազալ», և գերմանացի Տոն Գիլօթն ձին հեծած՝ իբր հրամանատար գալիս էր յետեց. բողբոջ կրիտիկական էր. ինչ կը լինէր որբանոցի վիճակը եթէ այդ կատաղի խուժանը յաջողէր ներս մտնել. սակայն Աստուած մեր հետ էր և մեզ յաջողում է իսկոյն փակել որբանոցի դռները և ամբասալ նրա յետև: Հէն Պաստոր Ֆոն Բէրգմանը հրամայում է բաց անել դռները. մենք պատասխանում ենք թէ այդ անկարելի է: Տէ՛ք ուրեմն ու՛զվող վըր բացազանցում է հերոսը, իսկ մենք անվրդով դիմանում ենք՝ սպասելով իրաց վախճանին: Որբերը և բոլոր պատասխարեալը լաց ու կոծ են անում եւ շվարած՝ չեն իմանում ուր փախել լիազպատաւ. ես սիրտ եմ տալիս նորանց, Պաստորը սպանում է կրակով, եթէ չը բանանք դուռը:

(Շարունակելի)

Մ Ա Ն Ի Ս Ա Ո Ւ Ի Բ

Յ. Գրիգորեան անուն Մեզրէցի երիտասարդը որ տարիներէ իվեր Փրովիտէնս կը բնակէր, վերջերս ամուսնանալ ուզելով՝ իր մօր կը գըրէ՛ որ իրեն յարմար նշանած մը գըտնէ: Գրիգորեան՝ բացակայութեամբ և իր լուսանկարի միջոցաւ՝ կը նշանուի Օր. Թագուհի Օլմանեան անուն գեղեցկագէտ մը աղջկան մը հետ: Այս վերջինն նիւ Եօրը կը հասնի վերջերս Գրիգորեանի դրկած 300 տուրք ծախքով. բայց Թագուհի առաջին տեսութեամբ կը մեծէ իր նշանածը: Միջամտութիւններ կ'ըլլան, վաղինակ վարդապետի դիմումներ կ'ըլլան, բայց իզուր. Թագուհի, որ 17 տարեկան է, կը մերժէ 39 տարեկան մարդու մը կինն ըլլալ: Բաղաբիս ձըրնը լրագիրը երկայն յօդուած մը

գրած է այս մասին Թագուհի և Գրիգորեանի պատկերներով, որոց մէջ այս վերջինը ներկայացուած են արեւելեան տարազով:

Անցեալ Կիրակի երեկոյ Լինի Որբանոցում ընկերութիւնն ընդհանուր ժողով մ'ունեցաւ, ուր խօսեցան Պատ. Չիթճեան և Տ. Չարաֆճեան: Գանի մը նոր անդամներ աւելցան ու հանգանակութիւն մ'ալ եղաւ:

Յառաջիկայ Կիրակի օր Ուսթըրի Հայ Բողոքականաց Ժողովարհին մէջ պիտի քարոզէ Պատ. Ստեփան Եաղուպեան, որ մասնաւորապէս նիւ Հէյվընէ հրաւիրուած է ժողովրդի կողմանէ: Պատուելին պիտի հիւրընկալուի Պ. Յ. Բարակեանի տունն, որ իւր մէկ ծանօթն է Ուսթըրի մէջ:

Յարութիւն Պողոսեան, Բարբերդի, որ Հայրենիք գնաց անցեալ շաբթու, 5 սուրար նուիրեց Հայ եկեղեցւոյ: Հայրենիք վերադարձող ամեն հայ շխալ չէ՞ որ հետեւի Պողոսեանի օրինակին:

Բաղաբիս ձըրնը լրագիրը ընդարձակ խմբագրական մը գրած է անցեալ Չորեքշաբթի աւուր թուոյն մէջ «Ասատուր Սիմոնեան» վերնագրով, որով Ասատուրի կորսնցուցած 1140 տուրքի մասին գրելէ վերջ կը նմանցնէ միամիտ հայր այն փոքրագի մեծահարուստ Ամերիկացիներուն, որք պատեհագի ժամանակ Սպանիոյ վախէն չէին գիտեր ուր պահել իրենց հարստութիւնն: Ասոնք ալ Սիմոնեաններ են, կ'ըսէ լրագիրը, սա տարբերութեամբ որ Ասատուր միամիտ արեւելցի մէջ, իսկ փոքրագի ամերիկացին՝ զարգացեալ աշխարհի գաւառ:

Հրտաքննի կը լսենք թէ անցեալ Կիրակի օր Սարգիս Ահարօնեան Իռլանտացիի մը հետ կուրի բռնուեր և զայն ձերբակալել տուեր է: Հետեւեալ օր Հայն ազատ կ'արձակուի, իսկ Իռլանտացին 15 տուրք տուաքանք կը վճարէ:

Ֆիլիպսի Մկրտիչ անուն երեսուն տարեկան մէկը անցեալ շաբթու օր մը 27րդ փողոցի վարի ճարարներ կողմէ կը վարձուի իբր գործաւոր. նորեկը նոյն գիշեր ճաշարանի մի ուրիշ գործաւորին Մ. Աճէմեանի սնունդն բանալով՝ 42 տուրք կը գողնայ ու շէնքին մէջ կրակ ձըգելով կը փախչի: Կրակը կը մարեն անմիջապէս: Հետեւեալ օրն գողութիւնն ալ երևան ելնելով Մկրտիչ կը ձերբակալուի, որ լուսածին նայելով, իր գողցած գրամը բոլորովին ծախսած էր հանդերձեղէններ գնելով: Ամբաստանելոյն դատը կը տեսնուի տակաւին:

Շարժումի մէջ կը կարդանք — Գահիրէի մէջ սկսած է հրատարակուիլ... քրդերէն լեզուա թերթ մը «Բիւրոյիսթան» անուն: Խմբագիրն է հանրածանօթ Պէտրըզա մը բարձր իշխանին որդին Միկիլատ-Միտհատ իշխանը: Այս թերթը եռանգով կը հըրաւիրէ իր հայրենակիցները թողուլ իրենց վայրենի բարքերը և քիչ մը... մարդ ըլլալ՝ մէկ կողմ նետելով թուրք կառավարութեան դահիճները ըլլալու բարբարոս դերը: Ուր էր թէ...

Բաղաբիս հայերուն մէջ սպօրէն կենսակցութիւնները տակաւ կը շատանան: Ամուրիներ հոմանուն հիւներու հետ ժամանակ կ'անցնեն. իրենց կիներուն հետ զօտուած այրեր ալ՝ ուրիշ կիներու հետ: Այս էր պակաս, ընտանեկան անբարոյականութիւն հայերուն մէջ:

Յիշեալիք և զմեզ... Ամերիկայի հայ գաղթականութեան մէջ այսօրինակ զէպերը քիչ կան...

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Տքթ. Յ. Հ. Մաթոսեան, թիւ 122 Իսթ 28րդ փողոց, շաբթուս մէջ իր արուեստին վերաբերող գործով նիւ Հէյվըն գնաց, ուսկէ պիտի անցնի Մաթթի Բարմըլ և Պրիմփորթ՝ բարեկամներ տեսնելու համար:

—Թուրք կառավարութեան դէմ պահանջ ունեցող հայ քաղաքացիք յարմարագոյն ժամանակն է որ դիմում ընեն Արտաքին Գործոց նախարարութեան: Այս մասին պէտք եղած թղթերը պատրաստելու համար վստահելի մէկը կայ որ յանձն կ'առնէ ծառայել այսօրինակ պահանջ ունեցողներու՝ խիստ գիւրամատչելի պայմաններով: Կրել առ «Վաստաբան» խմբագրութեանս միջոցաւ:

—Տ. Թովմաս Չավղապետեան ձէրդի մէջ անցեալներն կարգէ մը ինչպիսի ծանրապէս վնասուեցաւ ու հիւանդանոց զրկուեցաւ:

ԼՈՒՐՈՒՄ

Մեր 36րդ թիւ հանելուկը լուծած են հետեւեալ անձինք. Օր. Մարիամ Յովհաննէսեան (Երկու աչքէն կոյր), Յ. Ռուսեան, Մ. Պոյաճեան, Պ. Մանկէրեան, Օր. Ճիւհար Շիրինեան, Ա. Մեծատուր, Խաս Էլմաս, Ա. Սագաեան, Խ. Տօգուզլեան, Գալէմտար, Ս. Սանուրճեան, Յ. Գալուստեան, Մ. Հապէշեան, Գ. Ապտիկեան, Տիկին Բ. Շալճեան, Պ. Կոստանեան, Յ. Դերչեան, Չ. Գուստազեան, Մ. Տէր Յովհաննէսեան, Արուսեակ Պէգազեան, Խ. Ա. Պոյաճեան, Ս. Գոլմաճեան, Մ. Նաճարեան, Թ. Եաղճեան, Կ. Տիկնեան, Ա. Տեփեան, Հ. Սարգեան, Պ. Իսպիրեան, Յ. Բարակեան, Գ. ձէլալեան, Գ. Տէօբմէճեան, Յ. Նազլեան, Տ. Տապաղեան, Յ. Բալճեան և Յ. Ուշիկեան: Ասոնցմէ զատ 35 անձինք ևս լուծած են հանելուկն, բայց պայմաններն չի կատարած լինելով՝ զանց կ'առնենք անոնց անուններն:

Մրցանակ ստացած են Օր. Մարիամ Յովհաննէսեան (Ուսթըր), Արուսեակ Պէգազեան (Փրովիտէնս), Տիկին Շալճեան (Պրուքլին), Յ. Ռուսեան (Չիթթա), Գալէմտար (Նիւ Եօր): Հանելուկին ուղիղ լուծումն է. 1—15—14—4 12—6—7—9 8—10—11—5 13—3—2—16

Օրիորդ Մարիամ Յովհաննէսեան հետեւեալ նամակը գրած է մեզ այս առթիւ:

Ուսթըր, Յուլիս 18.

Ձեր Յուլիս 16ի թերթին մէջի հանելուկի պատասխանն ներփակեալ գտնել հաճեցէք, ոյն որ ճիշդ թերթին կէտերուն տեղն գրել տուած եմ, զի ես ինքս կոյր մ'եմ և չեմ կրնար գրել: Կը յուսամ թէ շխալ պիտի գտնէք զայն: Ձերը յարգանք ՄԱՐԻԱՄ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Խմբագիր

Ներեցէք որ յաւելում թէ ես գրեցի Օր. Մարիամ Յովհաննէսեանի համար այս նամակը, զի ինք կոյր մ'է երկու աչքէն: Անուշա շահագրքաւան է գիտնալ թէ անցեալ քիչեր արթուն կեցած և հանելուկն լուծած էր մտքով, և ցերեկին գրել տուած էր. երեկոյն երբ տուն դարձայ, ինձմէ խնդրեց զրկել ձեզի՝ իրեն համար գրելով այս նամակը: Կը յուսամ թէ այս քաղաքից պիտի ըլլայ հայ օրիորդներու համար, որ ջանան այդպիսի հանելուկներու լուծման աշխատելով օգտուիլ:

Մ. Ս. Թ. Ն.

